ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» մարտի 2014թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 10-ի <<Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին>> հ.485-Ա որոշման մեջ <<3/երեք/ տարի ժամկետով>> բառերը փոխարինել <<մինչև 2017 թվականի մարտի 10-ը>> բառերով:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 6-րդ հարկի 61.9քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2017 թվականի մարտի 10-ը ժամկետով տրամադրել <<Անդին Ա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Անդին Ա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Մերուժան Տեր-Գուլանյանը դիմել է Երևանի քաղաքապետին՝ Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքում ընկերության կողմից զբաղեցված տարածքը անհատույց օգտագործման իրավունքով ընկերությանը տրամադրելու խնդրանքով:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքը, համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.11.2011թ. հ.2817291 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Նշված շենքում <<Անդին Ա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից զբաղեցված է 52,4քմ և 61,9քմ մակերեսներով տարածքներ, որից 52,4քմ մակերեսով տարածքը Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 10-ի հ.485-Ա որոշմամբ անհատույց օգտագործման իրավունքով, 3 տարի ժամկետով տրամադրվել է ընկերությանը և որոշումից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում, իսկ 61,9քմ մակերեսով տարածքի նկատմամբ փաստաթղթային իրավական ձևակերպում կատարված չէ:

<<Անդին Ա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից միջազգային ժամանակակից ստանդարտներին համապատասխան, գունավոր տպագրությամբ և մեծ տպաքանակով հրատարակվում է <<Անդին>> վերնագրով՝ գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագիր, որի նպատակը հասարակության համար գրական, գեղարվեստական, փիլիսոփայական, հոգեբանական, սոցիալական և քաղաքական միտքն արտահայտելու ազատ դաշտ ձևավորելն է:

Հաշվի առնելով ընկերության կողմից իրականացվող գործունեության կարևորությունը մեր հասարակության համար, ինչպես նաև ընկերության հիմնադիր և տնօրեն Մերուժան Տեր-Գուլանյանի ունեցած բարձր հեղինակությունն ու բազմամյա աշխատանքային փորձը Հայաստանի մշակույթի, մամուլի, ինչպես նաև հասարակական և քաղաքական բնագավառներում, ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 6-րդ հարկի 52.4քմ մակերեսով տարածքի համար կնքված անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը մինչև 2017 թվականի մարտի 10-ը երկարաձգելու և 61.9քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2017 թվականի մարտի 10-ը ժամկետով <<Անդին Ա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու << Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ